

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՎ ՆԱԽԱՏԵՄՎԱԾ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ**

NN ը/կ	Միջոցառման անվանումը	2012 թ.	2013 թ.	2014 թ.	2015 թ.	Ակնկալվող արդյունքները	Պատասխանատու կատարողը
1	2	3	4	5	6	7	8
1.	ՀՀ տարածքային կառավարման նախարարության և Միավորված ազգերի զարգացման ծրագրերի Հայաստանի գրասենյակի կողմից իրականացված «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքները» տեղեկատվական ապահովում, վերլուծություններ և տիպաբանություններ» հետազոտության արդյունքում ստեղծված տեղեկատվական բազայի թարմացում	+	+	+	+	տարածքային կտրվածքով տվյալների տեղեկատվական բազայի ձևավորում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
2.	Արտադրական ենթակառուցվածքների հասանելիության մասին ամբողջական գնահատման համակարգի սահմանում (խմելու, ոռոգման ջրի ջրագիծ, գազատար, ճանապարհ,		+	+		Պետական կառավարման մարմինների կողմից համապատասխան իրավական ակտերով կհաստատվեն չափորոշիչներ,	համապատասխան բնագավառի պետական քաղաքականությունը մշակող և իրականացնող ՀՀ պետական կառավարման մարմիններ

1	2	3	4	5	6	7	8
	կապ և այլն)					որոնց հիման վրա կսահմանվեն իրականացվելիք ներդրումների առաջնահերթությունները:	
3.	Սոցիալական ենթակառուցվածքների հասանելիության մասին ամբողջական գնահատման համակարգի սահմանում (առողջապահական, կրթական հաստատություններ և այլն)		+	+		Պետական կառավարման մարմինների կողմից համապատասխան իրավական ակտերով կհաստատվեն չափորոշիչներ, որոնց հիման վրա կսահմանվեն իրականացվելիք ներդրումների առաջնահերթությունները:	համապատասխան բնագավառի պետական քաղաքականությունը մշակող և իրականացնող ՀՀ պետական կառավարման մարմիններ  ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
4.	Ինտեգրված սոցիալական ծառայությունների տրամադրման համակարգի ներդրում, համայնքի (տարածքի) սոցիալական կարիքների գնահատման, դրա հիման վրա տեղական սոցիալական ծրագրերի մշակման և սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների (լսնամքի ծառայություններ և այլընտրանքային այլ ծառայություններ տրամադրող) անհրաժեշտության (առաջնահերթության) մեթոդաբանության սահմանում	+	+	+		մեթոդաբանության սահմանում	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն  ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
5.	Մարզերի տնտեսական զարգացման ներուժի գնահատման մեթոդաբանության ամբողջացում	+	+	+	+	տարածքների տնտեսական զարգացման մակարդակների սահմանում	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ)  ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)

1	2	3	4	5	6	7	8
							<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p> <p>ՀՀ մարզպետարաններ</p>
6.	Տարածքներում ՀՀ պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին կատարվող ներդրումների արդյունավետության հաշվարկում		+	+	+	տարածքներում աղքատության մակարդակի նվազում	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p> <p>ՀՀ պետական կառավարման մարմիններ</p> <p>ՀՀ մարզպետարաններ (համապատասխան ծրագրերի առկայության պայմաններում)</p>
7.	Այլ տարածքների զարգացման և բարեկեցության վրա ազդեցություն ունեցող տարածքների (մարզ, համայնք, առանձին զարգացման կենտրոն համարվող քաղաք, միջհամայնքային միավոր, համայնքների խումբ) բացահայտում		+	+		մրցունակ և գրավիչ տարածքների ձևավորում	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ մարզպետարաններ</p>
8.	Մրցունակ և գրավիչ տարածքների զարգացման նպատակային ծրագրերի մշակում		+	+	+	տարածքներում ձեռնարկատիրության զարգացում	<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p> <p>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն</p> <p>ՀՀ մարզպետարաններ</p>

1	2	3	4	5	6	7	8
9.	Մարզային զարգացման ծրագրերի իրականացման տարեկան արդյունքների գնահատում և աղքատության նվազման վրա այդ գնահատականների ազդեցության հաշվարկում	+	+	+	+	մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման մոնիթորինգի համակարգի ձևավորում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
10.	Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման մոտեցումների և աղբյուրների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը			+	+	Տարածքային զարգացման հիմնադրամի ձևավորման առաջարկությունների մշակում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
11.	Մարզային զարգացման ծրագրերի մշակումը ստ ժամանակացույցի կատարվելիք ներդրումների գնահատականներով	+	+	+	+	ծրագրերով նախատեսված միջոցառումների առաջնահերթությունների սահմանում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն ՀՀ մարզպետարաններ (համապատասխան ծրագրերի առկայության պայմաններում)
12.	Փորձնական տարածքային զարգացման ծրագրերի իրականացում		+	+	+	ԵՄ-ի տարածքային զարգացման փորձի ներդրում	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
13.	ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 610-Ն որոշմամբ հաստատված տարաբնակեցման գլխավոր նախագծի մոնիթորինգի իրականացում		+	+		տարածական պլանավորման հնարավորություն	ՀՀ քաղաքաշինության նախարարություն ՀՀ մարզպետարաններ ՀՀ համայնքներ (համաձայնությամբ) ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

1	2	3	4	5	6	7	8
14.	Մարզերի և համայնքների մակարդակով վարչական ռեգիստրների ձևավորման հնարավորությունների ուսումնասիրում		+	+		մարզի և համայնքի անձնագրերի վարում	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ)  ՀՀ տարածքային կառավարման նախարարություն
15.	ՀՀ տարածքների կայուն զարգացման պահանջներին համապատասխանող ներքին միգրացիոն գործընթացների ուղղորդում	+	+	+	+	սահմանամերձ և այլ ռազմավարական նշանակություն ունեցող տարածքների բնակչության թվի նվազման կանխարգելումը և աճի խթանումը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն  ՀՀ մարզպետարաններ  ՀՀ պետական կառավարման մարմիններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ